


Գ Ի Ժ

# ՎԻԼՀԵԼՄ

Ե Կ

ՈՒՐԻՇ ՊԵՏՄԻԱԺՆԵՐ



891.99

Գ-56

891.99  
4-56

01 JAN 2009

EFOS ED. E 1

10 DEC 2011

ԱՐ. Ամբողջ արդիւնքը յատկացւած է  
պատերազմից տարագրւած հայերին

# ՎԻԼԶԵԼՄ

ԵՒ

002  
003

ուրիշ պատմւածքներ



Գ. Ի. Ժ.

№ 4

ԹԻՖԼԻՍ  
Տպարան «ՀՅԱՊԵՐԱԲՈՅ»  
1915

19.03.2013

23485

2013 ԱՐ 7 0

ԱՐ 300 Տ 3

Բոլոր իրաւունքները վերապահւած են:

Դիրքս նւիրում եմ քեզ, հայ մարդ,  
որ թողած՝ յարկիդ տակ ունեցած խա-  
ղաղ կեանքդ, գործդ, շահդ, վերցնելով  
հրացան, թռար պատերազմի դրօշի  
տակ կամաւորապէս օգնելու քրիստո-  
նիա խաղաղ ազգաբնակութեան քիւրդի  
և մահմեղական անգութ խուժանի ճի-  
րաններից խլելու շատ մանուկ կեան-  
քեր ու կոյս պատիւներ, պատւառը  
տեղ գրաւելով թէ՛ մեր սրտերի մէջ  
և թէ պատմութեան էջերում:

Յարգանք և խրախուսանք հայ կա-  
մաւորին:

Հեղինակ

# Ի Մ Ա Զ Գ Ի Ն

Յուրատ ձմեռ է, սուրբ քորանը պատել է,  
Լեռ, ծոր մշուշ եւ քամին է վնասում.  
Չին ու սառոյց կատաղաքար Մասիսի  
Հպարտ կուրծքը սպառնանքով են ճանգում։

Դեկտեմբերի միզն է թափում՝ ձմեռը.  
Եւ ամեն ինչ տրորում է, կործանում;  
Կարծես աշխարհն տակն ի վեր քանդելու.  
Գոյժն է սուրում Մեծ Մասիսի ականջին։

Բայց ծեր Մասիս շատ է տեսել ձմեռներ,  
Իր տաք կրծքով շատ է հայել սառոյցներ.  
Շատ ցուրտ ամիս նա անցել է տոկալով  
Կրկին գարնան ողջունելու ժպիտով։

Ոչ ցուրտ ձմեռ, ոչ սառցի կոյտ,  
Յուրի սուրոց, գայլի ոռնոց,  
Հրէ կարկոտ, ոչ մէկը, ոչ.  
Չեն մնայուն տարին ամբողջ։

Կանցնի բոլոր, ոլոր-մոլոր  
Ջուր կը դառնայ կը հոսէ ձին  
Ու ալ-կանանչ ծաղիկներով  
Կը ողջունենք Մասսին գարուն։

# ՎԻԼԶԵԼՄ

Դրամա 2 պատկերով

## ԳՈՐԾԱՊՊ ԱՆՁԻՆՔ

### ՎԻԼՀԵԼՄ

Գեն. Հինգենբուրգ թիկնապահը

Գեն. Սանդերս } գերմանացի ազնւակ.

Գեն. Սուշօն } Խիւրքիայում գործող

Էնվեր փաշայ

Ֆրանց Քիրխներ Վիլհելմի լրտեսը

Վիլրաւոր զինւոր

Զինւոր Վիլհելմի ծառան

Զինւոր Վիլհելմի դռնապանը

Դէպքը պատահում է պատերազմի դաշտում,  
Վիլհելմի վրանի մէջ. համաշխարհային պատե-  
րազմի IV-րդ ամսում։

**Վիլ.** — Լաւ կը լինէր որ մնայիր, բայց  
եթէ չես ցանկանում, գնա, սիրելի էնվեր,  
Աստւած քեզ հետ:

(Էնվեր փաշան դուրս է գնում. Սանդերս  
եւ Սուշոն ներս են մտնում):

**Վիլ.** — Բարե սիրելիներս, իմ հարազատ  
պաշտօնեաներս, ինչ լուր կայ:

**Սանդերս.** — Զերդ մեծութիւն, ուրա-  
խալի լուր պէտք է յայտնեմ: Վերջապէս  
Սև ծովի ամբողջ ոռւսական եզրաքաղաք-  
ները ոմբակոծելուց, հրդեհելուց, աւերե-  
լուց յետոյ Մեծն Ռուսաստանը պատերազմ  
յայտարարեց մուսուլմանների դէմ:

**Վիլ.** — Այս, քիչ առաջ լսեցի և սրտանց  
ուրախացայ, ուրեմն ոռւս-տաճկական պա-  
տերազմը հաստատ յայտարարւած է:

**Սուշօն.** — Այս, Seiner Majestät\*) և  
այդ շնորհիւ քաջն Սանդերսի:

**Սանդ.** — Խնդրեմ, խնդրեմ առանց գո-  
վասանքի, չէ որ դու տւիր ինձ այդ խոր-  
հուրդը ոմբակոծել Թուսաստանը:

**Վիլ.** — Երկուսդ էլ քաջ էք ու խելօք  
ինչպէս վայել է գերմանացուն, հէնց եր-  
կուսիդ համար էլ պատրաստւած է մեծա-

\*) Նորին Կայսերութիւն:

**Վիլհէլմ.** — Ուրեմն, սիրելի էնվեր, այս  
բոլորը գաղտնի կը մնայ մեր մէջ, եթէ յա-  
ջողեցրիր, քեզ համար շատ լաւ կը լինի,  
դու կը գառնաս այն մեծ փառքի ու պատ-  
ւի տէրը, քեզ է նշանակւած արժանանալ  
այն մեծ պատւանշանը, և քեզ միայն կը  
նշանակեմ միակ կառավարիչ կովկասի:  
Դէն, քեզ տեսնեմ, իմ խելօք էնվեր:

**Էնվեր.** — Զեր հլու ծառայ:

**Ծառայ.** — Գեներալներ Սանդերս և  
Սուշօն:

**Վիլ.** — Խնդրիր ներս բարեհաճել, ահա  
կը գան և նրանք ու մենք կը խորհրդակ-  
ցենք թէ ինչպէս և ինչ կերպով պիտի կա-  
րողանանք տապալել այդ հզօր ու անյաղ-  
թելի կարծւած Թուսլանդին:

**Էնվ.** — Խնդրեմ, Զերդ Կայսերական  
մեծարութիւն բարեհաճեցէք թոյլ տալ ինձ  
հեռանալու: Ես աւելորդ եմ այժմս, քանի  
այստեղ կը լինեն գեներալներ՝ Սանդերս և  
Սուշօն, ես կը գնամ, կ'աշխատեմ կատարել  
Զեր բարձր հրամանները: Զեր հլու ծառայ:

մեծ շքանշաններ և իմ գանձարանի ոսկիները. միայն այժմ այն ասացէք, ինչ կերպ յաջողեցրիք նաւերը Սև ծով հանել:

**Սանդ.**—Երբ ընկեր Սուշօնի հետ ոռոշեցինք այդ կերպ արագացնել ոռուս-տաճկական պատերազմը, պահանջեցինք Սուլթան Մուհամեդից մի քանի նաւ մեր տրամադրութեան տակ դնել. իսկ նա իհարկէ մերժեց, այն ժամանակ...

**Սուշ.**—Մենք սպառնացինք իսկոյն ևեթ ոմքակոծել կ. Պօլիսը...

**Սանդ.**—Իհարկէ մենք այդ երբէք չէինք կարող անել, բայց...

**Սուշ.**—Այդ վախկոտները հաւատացին և կատարեցին մեր հրամանը, մէկ էլ ձերդ մեծութեան ուղարկած ընծաները, որ հէնց այդ օրը ստացաւ Սուլթանը, մեծ ազդեցութիւն ունեցաւ նրա վրայ:

**Վիլ.**—Վաղը նորից կուղարկեմ հարուստ ընծաներ ընկեր Մուհամեդին, միայն թէ նա խօստանայ կատարել իմ հրամանները:

**Սանդ.**—Այդ անպիտանները շատ վախկոտներ են, քրիստոնեաներին գեաւուր են անւանում, իսկ իրենք աւելի վատթար են, երեակայեցէք, Seiner Majestät, անցեալ

օրն ահաղին խլրառում էր առաջացել մեր և թուրք զօրքերի միջև, որոնք մինչև մեր վրայ հասնելը բաւականին գերման զինւորներ էին սպանել:

**Վիլ.**—Այդ մրտեղ:

**Սուշ.**—Ոչինչ, մի չնչին դէպք էր պատահել Ազրիանապօլսում: (ցածը Սանդերսին) Տօ լինչ ես անում, միթէ մի այսպիսի ժամանակ կարելի է նրան բարկացնել, շատ հարկաւոր է, թող էդ էլ պակաս մնայ, ինչպէս միւս բաները, ամեն բան չեն ասում կայսրին:

**Վիլ.**—Այդ ոչինչ, սիրելի գեներալներ, հիմա պէտք է մի կերպ աշխատէք, որ ղազաւաս հայտարարէ Շէյխ-իլ-հալալը և ամեն ինչ վերջացած կարելի է համարել, եթէ այդ ևս յաջողեցրիք, Սանդերս, գու կը լինիս երզրումի վիլայէթների վիցէ քեօնիկը, իսկ գու Սուշօն, Կովկասինը:

**Սանդ.** և **Սուշ.**—Hoch\*), hoch, hoch երեք անգամ հօշի մեր կայսրին, խորին շնորհակալութիւններ մեր lieber կայսրին:

**Ծառայ.**—Գեներալ Հինդենբուրգ:

**Վիլ.**—Խնդրիր մանել:

\* ) Կեցցէ:

**Սանդ. և Սուշ.** — Մենք գնում ենք մեր պարտը կատարելու, Seiner Majestät խորին յարգանաց հաւասարիքը:

**Վիլ.** — Դուք գնում էք լաւ, գնացէք խաղաղութեամբ:

(Սանդ. և Սուշօն գնում են. ներս է մտնում զեներալ Հինդենբուրգը)

**Վիլ.** — Միրելի Հինդենբուրգ, ինչ կայ վերջին լուր: (պատզա) Երեխ վատ լուր, zum Teufel\*), դարձեալ, մինչև երբ պէտք է ինձ տանջէ պատերազմի աստուածը, donner-wetter\*\*), արտասանիր մի վախիր! շուտ! խօսի՛ր:

**Գեն.** Հինդ. — Նորին մեծութիւն այսպիսի անյաջողութիւն դեռ չէինք ունեցել՝ այդ անպիտան ռուսները, Նորին Մեծութիւն...

**Վիլ.** — Կարճ կապիր, բանն ինչումն է, խօսի՛ր, zum Teufel, սատանան տանի Նորին մեծութիւն, Նորին մեծութիւն, ի՞նչ ես առել անցել, ինչպէս եղաւ Վարշավան վերցըլք:

**Գեն.** Հինդ. — Վարշավային շատ էինք

\*) Սատանան տանի.

\*\*) Գոռում գոչում.

մօտեցել, ընկանք ռուսների ծուղակը մի լաւ ջարդեցինք, բայց ներեցէք, Նորին մեծութիւն, այս անգամ մեղաւորները քո հրամանատարներն էին:

**Վիլ.** — Իմ հրամանատարները, որո՞նք:

**Գ.** Հինդ. — Գեներալներ Վիսալ, Կիբաթելի, և Վախման:

**Վիլ.** — Ի՞նչ են արել նրանք:

**Գեն.** Հին. — Մեր զօրքին դիտմամբ շատ առաջ են քշել, մօտեցրել վարշավային և այստեղ ռուս զօրքը մերոնց բոլորովին ջարդել է և 7000 բանակից մնացել էին 60 հոգի, նրանցից մինին բերել եմ այստեղ, որ Նորին մեծութիւնը կարողանայ նրան խօսեցնել և բանի էութիւնը հասկանալ:

**Վիլ.** — Հրամայիր ներս բերել դրան:

**Գեն.** Հին. — (ղուան միջից) Ներս թողէք զինուորին, (ներս է մտնում վիրատը զինուորը):

**Վիլ.** — Ո՞ր կուռւմն էիր:

**Զինւ.** — Վարշավայի մօտ:

**Վիլ.** — Ո՞վ էր ձեր հրամանատարը, և ինչպէս կռուեցիք, պատմիր մանրամասն:

**Զին.** — Մեր հրամանատարը Գեներալ Վիսալ, Սլաւօնական ցեղից, նրա օգնական

Գեներալ Քիբաթելի իտալայի ինչպէս  
վերջը նկատեցին արօղը մեզանից շատ  
հեռու է պահել, իսկ մեզ առաջ տա-  
րել Վարշավայի տակը, այստեղ մենք  
դիրքերը մտանք և կռւում էինք, փամ-  
փուշաներս վերջացաւ մի քանի օր էլ  
քաղցած էինք, ուզում էին յետ նահանջել,  
բայց նրանք հրամայեցին վրայ տալ, ու-  
ղեցին սւինային կռւով վերցնել, բայց ինչ  
կռիւ, ով կարող է ոռւս զինւորի սւինին  
դիմանալ, երբ տեսանք որ 7000-ից միա-  
ցինք 60 հոգի էլ չընայեցինք նրանց հրա-  
մաններին, թողինք ամեն ինչ ու յետ փա-  
խանք, փախչելիս ոռւս պուլեմեօթից վի-  
րաւորւեցի:

Վիլ.—Գեներալ Հինդենբուրգ հրասա-  
յում եմ գեներալ Վիսալին, և գեներալ  
Քիբաթելին գնդակահարել, բեր հրամանա-  
թուղթը ստորագրեմ, նա, գեներալ Վախ-  
մանի անունն էլ տուիր, նա ինչ էր արել:

Զին.—Նա մի ուրիշ գնդի հրամանա-  
տար էր, որ կռւում էր մեր աջթեի վրայ,  
նա աջ թեկից յետ նահանջեց, որ կարող է  
չփախչել, թշնամին գրաւելով նրա դիրքը,  
անցաւ մեր թիկունքը և մի լաւ ջարդ  
տւեց, եթէ այդպէս չանէր, մենք կարող  
էինք յաջող կերպով յետ նահանջել:

Վիլ.—Գեներալ Հինդենբուրգ, հրա-  
մայում եմ գեներալ Վախմանին ինձ մօտ  
բերել քննութեան, տուր թուղթը ստորա-  
գրեմ: (զինտրին տալիս է շքանշան) Ահա  
քեզ, ազատ ես:

Ծառայ.—Սուրհանդակ է եկել:

Վիլ.—Գեներալ Հինդենբուրգ, գնա տես  
ինչ է ասում (Դիներալ Հինդէնբուրգը զնում  
է): Այս անգամ էլ անյաշողութիւն! երբէք  
մտքիցս չեր անցնի, մէթէ վերջապէս ես  
Վիլհէլմս պէտք է յաղթւիմ, ոչ երբէք, ինչ  
էլ որ լինի, ես յաղթողը պիտի հանդիսա-  
նամ, պէտք է հրամայել նախ և առաջ Տուղ-  
րութ և իզգէթ փաշաներին, որպէս զի Բոս-  
ֆորի և Դարդանելի ականները ամենսին չը  
բանան, երկրորդ պէտք է հրամայել, որ 17  
տարեկանից զօրահաւաք անել՝ թէ Քերմա-  
նիայում, թէ Աւստրիայում և թէ Թիւրքիա-  
յում, իսկ այդ անպիտան Աւստրիան, վեր-  
ջին օրերս էլ չի ուզում ինձ հպատակւել,  
իր ամբողջ զօրքը հաւաքեց տարաւ Կրա-  
կով. Էտ քիւաթառո՞ երբ պէտք է մեռնի,  
որ պատանի կարլ Ֆրանց Յովանի իմ ձեռ-  
քում խաղալիք դառնա... Ծերունի է, հօ չի  
կարելի ամեն անգամ խստութեամբ հրա-  
մայել (որսից լսում է աղմուկ, ներս է ընկ-

նում Փրանց Քիքինեւը. երկու պահապան գինտըները բռնելով թեւերից արգելք են լինում):

**Ֆրանց.**—Ես ի՞նչ անիծածներ են ձեր զինւորները կայսր, ինձ, ֆրանց Քիքիներիս չեն թողնում ազատ ներս մտնել քեզ մօտ (ֆրանցի խօսած ժամանակ Վիլհէլմը ծեռողով է անում զինւորներին որ ազատ թողնեն եւ հեռանան: Զինւորները գնում են):

**Վիլ.**—Դատարկութեամբ մի զբաղկիր, ապա մի առ մի պատմիր ի՞նչ լուրեր են հաղորդում քո քաջ լրտեսները:

**Ֆրանց.**—Կարճ կապեմ, թէ երկար:

**Վիլ.**—Կարճ կապիր, վերջացրու և գնա որ քեզ այստեղ չը տեսնեն:

**Ֆրանց.**—Ուրեմն լսիր, Պոլսից հեռագրում են, որ ժողովրդի մէջ յեղափոխութիւն է նկատւում.

**Վիլ.**—Օհօ:

**Ֆր.**—Սպասիր, առաջին լուրի վրայ արդէն տաքանում ես, կաց, պաղարիւնութեամբ լսիր:

**Վիլ.**—Սանասրառութիւն, լաւ, պատ-

**Բր.**—Ռուսը այրում է Տրապիցնը. Բաթումի մօտերը թուրքերի իշեցրած դե-

սանդը ջարդւել է, էրզրումի գերմանական կօնսուլ Անդրեսը ձերբակալւած է ոռւսների կողմից. ոռւսները մտագիր են մեզ կ... բերդը, այնտեղ՝ կովկասում յառաջ քաշել և ջարդել, նրանք ամբողջ շրջակայքում միներ են դրել:

**Վիլ.**—Սատանան տանի շատ հոգսս է թիւրքը և կովկասը, դրանք միայն նրա համար են, որ ես այս կողմը յաղթութիւն տանեմ: Պատմիր ինչ կայ այս կողմից:

**Ֆր.**—Հերթով, կայսր, հերթով Վ...ի գլխաւոր շտաբի ժողովը գաղտնի որոշել է մեր այս անգամւայ արշաւանքին զո՞ն շատ ըլ տալ և Վ... կամովին մեզ յանձնեն:

**Վիլ.**—Այդ լաւ է, որ այդպէս է աւելորդ զօրք չը պէտք է այստեղ զբաղեցնել. Լանդշտուրմի 156 գունդը պէտք է ուզարկել Ֆլանտրիա: Այսեղից ի՞նչ լուր կայ:

**Ֆր.**—Վատ լուրեր, ֆրանսիան լաւ է դիմագրում, և կամենում է առանց զոհեր տալու քիչքիչ մեզ յետ քշել և ջարդել, այդ ժամանակ անտանելի...

**Վիլ.**—Վեճով հասար մայ քայլանաց անցնում է Հօւշեմի յանձնը, անմայ է զաւոյնը, եւ այս է տպում է վրեւթիւնն սիներ, վերջինս յետ է դանում, որ հարց տար,

նկատում է եւ քոնելով նրա ձեռքից խլում  
է դաշոյնը): Անպիտան, սատանի ճուտ,  
այդ ինչ է, գաւաճան. (սուլում է, երկու  
զինուրներ ներս են մտնում զիներալ Հին-  
դենբուրգի հետ), ինձ ուզում ես սպանել,  
իմ հաւատարիմ լրտես, գաւաճան. զինուր-  
ներ, խուզարկեցէք և կալանաւորեցէք դրան:

(Զինուրները խուզարկում են, մինը ղը-  
նում է կապանքները եւ կալանաւորելուց յե-  
տոյ երջ զնում են, յետ է դառնում Քիրի-  
ները եւ ուզում է խօսել Վիլհելմի հետ, զին-  
ուրները արգելը են լինում):

**Ֆր.**—Կայսր, լսիր վերջին խօսքս, երբ  
ես Ասզիփա էի լրտեսութեան, ինձ բոնեցին.  
ինձ մօտ գտնելով փաստեր և ճանաչելով  
լրտես, հրամայեցին ինձ զնդակահարել, բայց  
վերջը, մարդիկ մէջ մտնելով կաշառեցին  
ինձ. և ես խոստացայ նրանց յանձնել Վիլ-  
հելմի գլուխը, ստանալով նրանցից 10 մի-  
լիօն ֆրանք, 10 միլիօն գիտէք, 10 մի-  
լիօնով երկիր կարելի է գնել և թագաւորի  
նման ապրել, հիմա ինչ ուզում ես հրա-  
մայիր:

**Վիլ.**—Անիծւած, կը հրամայեմ քեզ  
զնդակահարել, զինուրներ, այժմս տարէք  
դրան բանդ, և սպասեցէք ցնոր կարգա-

դրութեան: (զինուրները լուրս են տանում  
կալանաւորւած Փրանցին): Ո՞հ, շատ վատ են  
գործերս, եթէ այսպէս շարունակւի, ճիշտն  
ասած իմ բանը բուրդ է, ինչ պէտք է լի-  
նի պատերազմի վերջաւորութիւնը. ես այս  
կերպ չէի սպասում... Ճիշտ է Սւատրիան  
կը կործանւի, նրա գերմանական մասը ես  
կը ստանամ, բայց շատ տեղեր էլ ձեռքիցս  
խեցին, գաղութներս յափշտակեցին. Թիւր-  
քիան էլ բաժան-բաժան անելիս ինձ աքա-  
ցիով դուրս կը ձգեն, չէ, Վիլհելմ, քո այս  
գործը յիմարութիւն էր, լիմար, աւանակ, Esel\*), ճիշտ որ աշխահրքում ամենախելօք  
մարդն անգամ երբեմն յիմարանում է, սա-  
տանան տանի, հաշիւներս տեղը չեկան,  
Վիլհելմը մեղաւոր չէ... (Ընկնում է խոր  
մուածմունքի մէջ, յետոյ զլուխը զնում է  
սեղանի վրայ. զիսը մթնում է, լսում է  
քամու ուզոցը, օրով ծայները. կայծակ. ամ-  
պի որոտում, անձրեւ է զալիս, կարծ ժա-  
մանակից յետոյ երեւում է նապօլէօնի ոգին.  
լրյսի շող է ընկնում միայն նրա վրայ):

**Նապ.**—(Վիլհելմի ետեւից ամբողջովին  
քողով ծածկած) Գիյիօմ\*\*):

\*) էշ:

\*\*) Ֆրանսերէն. Վիլհելմ:



Վիլ. — Այս ժկ է ինձ անհանգստաց-  
նում:

Նապ. — Վիլլի! Ես Նապօլէօնս, ահա  
երկրորդ անգամն է, որ գալիս եմ քեզ զգու-  
շացնելու, և նոյնն եմ կրկնում, եթէ եր-  
րորդ անգամն էլ դու ինձ քեզ մօտ հիւր  
ունենաս, այն ժամանակ գիտցիր որ քո  
վերջն է:

Վիլ. — Դու, մեծն Նապօլէօն, ես քեզ  
հետեւ ուղեցի:

Նապ. — Ես ոչինչ չեմ ուզում լսել,  
խորհուրդ եմ տալիս, կամ աւելի շուտ հրա-  
մայում եմ շուտով դաշն կապել:

Վիլ. — Այնպէս չեմ ընկել ծուղակը, որ  
կարողանամ հաշտելու մասին մտածել:

Նապ. — Հանձարեղ Վիլհէլմ, միթէ այդ-  
քան բան չես կարող դուխ բերել, էլ ին-  
չացու ես, էլ ինչու ես հերոսների անունը  
կեղտոտում և գլխիցդ մեծ գործեր բռնում,  
ապնաշ:

Վիլ. — Ի՞նչ կարող եմ անել:

Նապ. — Մտածիր ինքդ, բայց կրկնում  
եմ հաշտեիր. (անյայտանում է եւ անմիշա-  
պէս յուանում է):

Վիլ. — Կաց, կաց սպասիր, Նապօլէօն,  
վերադարձիր, սակայն բացատրիր, ասած-

ներդ, լրացրու խօսքերդ, աւաղ, չարագու-  
շակ ուրաւականդ լաւ նշան չէր, խօսքերդ  
անհասկանալի, խորհուրդդ անհնարին... եթէ  
երրորդ անգամ երկամ, դու կը կործան-  
ւես. (Ներս է մտնում զններալ Հինդենբուրգ)  
կարող է պատահել, բայց մինչեւ այն ես կը  
շտապեմ հաշտութեան մասին մտածել, այն,  
անպատճառ գլուխ կը բերեմ:

Գին. Հինդ. — Նորին մեծութիւն (պա-  
տզա): Նորին մեծութիւն:

Վիլ. — Ի՞նչ է, ի՞նչ է:


Գին. Հինդ. — Սուրհանդակը լուր բե-  
րեց, որ կուռւմ վիրաւորել է ձեր սիրելի  
որդին կրօնպրինց ֆրիդրիխը:

Վիլ. — Իմ ֆրիդրիխը, Himmel-donner  
wetter, իմ որդին, ալ կործանւեց աշխար-  
հըս, կորան յոյսերս... Նապօլէօն, ես քեզ  
խօսք տւի հաշտել, բայց ոչ, երբէք, երե-  
ցիր թէկուզ երրորդ անգամ, միենոյնն է  
ինձ համար, վրէժմ պէտք է լուծեմ... (ծեռը  
ծգում է սուրը հանելու, բայց ընկնում է  
զետնին): Ախ, սիրաս, որդիդ իմ ֆրիդրիխ...

## II ՊԱՏԿԵՐ

(Վիլհելմը ընկած է գետնին, Նապօլէօնի ոգին կանգնած է նրա զլիսի վերև, բենգալիան կրակները վառվում են, կենդանի պատկերներ):

Վ Բ Բ Ա Ռ Ո Յ Թ



## ԵՐԿՈՒ ՔՈՅՑՐԵՐ...

(Պատկեր)

Տ... աւանի հայ ժողովրդի լաց ու կոծը աշխարհը էր բռնել: Այն օրից ի վեր երբ թիւրք զօրքը ներս լցւեց և թիւրք խուժանը միացան նրանց հետ, հայի աչքերը մթնեցին: Այսն ու թալանիը, ջարդն ու սպանութիւնը թիւրքին խաղ էր, հային մահ:

Ալին ու իզմայիլը, երկու թիւրք երիդասարդներ, մինը կարճահասակ և տգեղ դէմքով, միւսը գեղեցիկ բոյ ու բուսաթով, երկու ընկերներ էին ամեն տեսակ գործի և աշխատութեան մէջ:

Երբ կշտացան թալանից, երբ յագեցան խեղճ հայի ամբողջ գոյքը գրաւելով իրանց ապահովցած համարեցին ու որոշեցին այսուհետեւ միւմի գեղեցիկ հայուհի փախցնել և գեաւուրից թալանածը հանգիստ վայելել:

Մի քանի հայուհու գեղեցիկները համեմատելուց յետոյ որոշեցին երկու աղջիկ, ամենագեղեցիկները, երկու կոյս քոյլեր, մինը-միւսից գեղեցիկ, բայց նրանց անց-

կացլած դառն օրերը, դրօշմել էին իրանց  
կնիքը քնքոյշ դէմքի վրայ: Մատաղահաս  
Ծաղիկն ու Մանուշն էին դրանք, կտրիչ  
Փառնայ երիտասարդի նորահաս քոյրերը:

Օրը ուրբաթ էր: Ալին ու Իզմայիլը  
զուգւած զարդարւած, հպարտ-հպարտ քշում  
էին իրանց ձիերը դէպի Փառնաենց տունը:  
Այնտեղ իջնելով, ամենից առաջ նրանք  
կապկապեցին Փառնային:

—Պահանջեցէք փող, ոսկի, մեր զար-  
դերը, ինչ որ կամենում էք, պաղատում էր  
Ծաղիկը, միայն ի սէր Աստծոյ ազատ թո-  
դէք եղբօրու:

—Լաւ, խօսեց Իզմայիլը, մենք կար-  
ձակենք քո եղբօրը, եթէ միայն խօստա-  
նաք դու և քոյրդ մեզ սիրելու և մեզ հետ  
գալու:

—Ոչ, այդ երբէք, ճշաց մանուշը:

—Այն ժամանակ կը մորթենք մենք  
ձեր եղբօրը, միջամտեց Ալին և ձեզ ոյժով  
կը տանենք:

Ոհ տանջանք, Այդ ինչ ըոպէներ է որ  
տեսնում և անցկացնում են խեղճ աղջիկ-  
ները: Այդ ինչեր են լսում և այն էլ ու-  
մից: Սիրել ոյժով, և ում, մի պիղծ թիւր-  
քի, միթէ սէրը վայել է կեղտառին, իսկ

խեղճ կոյսերը կարծում էին թէ միմիայն  
անարատ սիրով կարող է սիրել: Թիւրքը  
սիրում է և պահանջում է իրան ևս սիրել,  
բայց միթէ ճշմարիտ սիրում է գաղանը, թէ  
մի գուցէ վայրկենական զազրելի զգաց-  
մունքներն են կամենում յագեցնել: Սիրել  
և նետւել դարաւոր թշնամու գիրկը, ոչ,  
երբէք...

Հը, միք ուշացնի, գոչեց Ալին, մենք  
շտապում ենք, եկել ենք, որ ձեզ տանենք,  
շուտ պատասխանեցէք, կտմով կը յանձնւիք  
թէ ոյժով իրենք ձեզ հայրենի օջախից:

—Միք վախենայ, վրայ բերեց միւսը, մեր  
ջանք ողջ լինի, ձեզ կը տանենք Պօլիս, մեր  
գեղեցիկ մայրաքաղաքում, մենք ձեզ կը պա-  
հենք, կը փայփայենք, ձեր ծնողներից էլ  
լաւ կը նայենք ձեզ, ձեր որդիկերանցը ու-  
սումի: կը տանք, դուք կը լինէք մեր խա-  
նումը, իսկ մենք ձեր ծառան...

—Նրանց ծառան լինելու էլ արժանի  
չէք դուք, անպիտաններ, նրա խօսքը կտրեց  
ցաւից կծկւած, յուսահատ Փառնան:

Զայնդ գեաւուր, դու խօսելիք չունես,  
քոյրերդ կը որոշեն քո բաղդը, կամ այս,  
կամ ոչ, նու, սիրունիկս, շարունակեց իզ-

մայիլը, դառնալով պէտի օրիորդները, իս  
աննման ազունիկս, պատասխանիր:

Բաղդը չէր ժպտում, բաղդի խաղ էր  
այդ, միթէ կարելի էր այսքան տարւայ  
փայփայած կուսութիւնը յանկարծ յանձնել  
թիւրք աւազակին: Իրար զըկած, իրար աշ-  
քերին դիտելով մտածում էին խեղճերը:  
Ինչ անել, ինչ ելք գտնել որ թէ եղբօրը  
ազատել տիրանի ճանկերից և թէ իրանց  
պատիւը: Բայց ոչ մի ելք, կամ եղբայրը  
կամ իրանք պէտք է կորչէին:

Եղբայրը աղերսում էր, որ չը համա-  
ձայնւեն, և որ թող իրան սպանեն, միայն  
թող քոյրերը ազատ մնան արատաւորումից,  
բայց այլ էին մտածում քոյրերը: Եթէ  
մենք հակառակւենք, կսպանեն մեր եղբօրը  
և մեզ կը տանեն, իսկ եթէ կամովին յանձ-  
նւենք, մեր եղբայրը ազատ կը մնայ:

Եւ երբ Մանուշը ձեռքը գրպանը տա-  
րեց, որ թաշկինակը հանէ արցունքները  
սրբելու, գրպանում մի բանի շօշափեց, յի-  
շեց, մի ակնարկ ձգեց եղբօրը, յետոյ քրօջը  
և ասաց.

— Յանձնւենք?

— Յանձնւենք! պատասխանեց Ծաղիկը:  
— Այո մենք պատրաստ ենք, միայն

երկու պայման ունենք, խօսեց նորից Մա-  
նուշը:

Գազանի աչքերը փայլեցին, կիրքը,  
ցանկութիւնը դագատնակէտին էր հասել  
երկուս չէ թէկուս տամներկու պայման ա-  
ռաջարկէին, նա սիրով կը կատարէր, միայն  
նրան գեղեցիկ աղջիկներ յանձնէին:

— Ասա խօսիր, մենք կը կատարենք  
ձեր պայմանները, եթէ ընդունելի են:

— Նախ և առաջ արձակեցէք մեր եղ-  
բօրը մեր աչքի առաջ, խօսեց Մանուշը, և  
յետոյ տասը ըոսէ ժամանակ տւէք մեզ  
պատրաստելու:

Կատարւեց առաջին պահանջը, արձա-  
կեցին եղբօրը: Ծաղիկն ու Մանուշը ներս  
մտան պատրաստելու:

Փառնայի խիղճը մի վայրկեանից յե-  
տոյ արդէն սկսեց տանջել, իրա կեանքը  
ազատութիւնը ձեռք բերւեց երկու քրօջ  
պատով, որին ոչ մի հայ տղաւչէր համա-  
ձայնւի ոչ, երբէք և... խելակորոյս, ան-  
մտածածին, վրայ վազեց, յանկարծ խլեց  
զարմացած Աղիկ խանջալը, ձեռքը բար-  
ձրացրեց որ խփէ մէկի կրծքին, ապա միւ-  
սին, բայց յետեկից բռնեց իզմայիլը նրա  
կուռը և այս անգամ պատկերը փոխւեց,

խանջալը խրւեց Փառնայի կրծքում։ Մի  
ախ թռաւ նրա կոկորդից և գեղեցիկ երի-  
տասարդը արիւնաթաթախ փռւեց գետնի  
վրայ։

Իսկ կից սենեակում երկու քոյրերը  
պինդ գրկւած, համբուրւում էին և իրար  
վերջին հրաժեշտն էին տալիս... նրանք ար-  
դէն խմել էին այն թոյնո, որ միշտ տանը  
ունենում էին մկների համար և որ վերջին  
օրերը վերցրել էին այսպիսի գէպքերի հա-  
մար։

Արդէն ներգործում էր թոյնը նրանց  
օրգանիզմի վրայ և յանկարծ երբ եղբօր  
հառաջոցը լսեցին, դուրս վազեցին և ընկան  
եղբոր կտրտուած դիակի վրայ և անշնչացած  
մնացին։

Ային ու իզմայէլը չարացած այդ ա-  
րարքից, վրէժ լուծեցին անշնչացած դիակի  
վրայ և մաս-մաս արին նրանց, մինչև ան-  
գամ ականջները երկու մաս արին որ չը  
լինի թէ ասեն, «ողչ տեղը ականջը մնաց»։



## Ա.Ռ.Ա.ԶԻՆ ԶՈՀԸ

(Գաղթականի պատմւածքը)

—Այո, տխուր է իմ պատմութիւննե-  
րը, հառաջեց մի քաջ կին —գաղթական Ա...  
աւանից։

—Ոչինչ, տխուր արկածներ աւելի սի-  
րով ենք լսում հիմայ, աղաչում էինք մենք։

—Դէն, որ այդպէս է կը պատմեմ ես  
ձեզ մի գէպք, լսեցէք, այս ասելով առաջ  
քաշեց իր աթոռը, մօտեցրեց թէյի բաժա-  
կը և սկսեց։

—Քառասունը երեքերորդ օրն էր։ Ո-  
րովհետև տղամարդկանցից շատերը թագ-  
նւել էին, լուր տարածեցին թիւրքերը, որ  
այս երեկոյ հարս ու աղջիկ պէտք է փախ-  
ցնեն։

Կը լինէր ժամը 9-ը։ Լուսինը գեռ եր-

բէք իր աղօտ շողքը չէր ձգել այդքան գեղցիկ փայլով Ա...ի վրայ, ինչպէս այդ երեկոյ: Յանկարծ երեք տեղից հրացանի տրաքոց լսւեց: Դա մի արտասովոր բան չէր մեզ համար, դարձեալ վերսկսւելու էր թալանը: Բայց մենք կրկին շնորհակալ էինք Աստածանից, որ ջարդ չէին անում՝ գաղան շուն թիւրքերը: Եւ որովհետեւ հայտարաւած էր, որ հարս ու աղջիկ պէտք է փախցնեն, տղամարդիկ քիշ-քիշ դուրս էին գալիս թագստատեղերից, իսկ կանայք աւելի խորը թագնուում:

—Հետաքրքրութիւնս ինձ յաղթեց: Փող ելայ տեսնելու, թէ արդեօք ինչ են անում: Ամենից առաջ վարդապետի տան պատուհանից լոյս երեաց: Վազեցի դէպի այն կողմը և քիչ հեռու կանգնած դիտում էի:

—Վարդապետը լոկ շապկով կանգնած էր իր սենեակի առջև, սանդուխքների գըլխին և բաղխում էր իր դուռը: Շուն անօրէն թիւրքերը հանել էին նրա վրայից քահամնայական սև շօրերը, դուրս էին արել նրան սենեակից, իսկ իրանք ներսը զբաղւում էին: Զը մօռանամ ասել, վարդապե-

տը իր սենեակներից մէկում տեղ էր տւել մօտակայ Ա...ից մի քանի փախած կանանց և տղամարդկանց: «Ի՞նչ որ կամենում էք կը տամ», բղաւում էր քահանան, «Ներս թողէք ինձ, ինչ էք ինձ իմ սենեակիցս դուրս արել, թողէք ներս մտնեմ, ցուրտ է, մըսում եմ», բայց լսող չը կար: Եւ քահանայի գերուկ մարմինը դողում, ցնցւում էր ցրտից, իսկ լուսինը սառնարիւն հայացքը աշխարհին ուղղած չէր լսում սուրբ մարդու աղօթքն ու աղաչանքը և ընթանում էր իր սառն ճանապարհով... նա անտարբեր էր...

—Քիչ յետոյ դուռը բացին և դուրս ձգեցին այն միակ տղամարդ գաղթականին որ ներսն էր մնացել կանանց հետ:

—Այնպէս անցաւ բաւական ժամանակ: Եկան թիւրք զինուորները քահանայի թևերը կապեցին և նրա մարմնի վրայ իրանց դաշոյնի պէտքական և անպէտք լինելն էին փորձում: Խեղճ վարդապետ, ինչ տանջանքներ տւին, ինչ ցաւեր քաշեց, Յիսուսի կողը միայն մի անգամ ծակեցին նիզակով, իսկ դրան տասնեակ տեղերով խոցոտեցին:

—Արիւնը կաթիլ-կաթիլ հոսում էր, իսկ քահանան մօռացած աղօթքը, միմիայն

դէպի վեր էր նայում, կարծես կամենում էր իր նայւածքով, իր աչքերի մագնիսական զօրութեամբ Աստւածանից գթութիւն ներքև քաշէր: Նա չէր աղօթում, նրա շըրթունքները չէին շարժւում, նա միայն ցաւից տանջւում էր, նրա մարմինը ցաւում էր, ինչ զրութեան մէջ էր այդ ժամանակ նրա հոգին, այդ... արցունքները խեղդեցին և այլևս չը կարողացաւ շարունակել.

Երբ մի քիչ հանգստացաւ, թէյի բաժակը դատարկեց, մի ուրիշ թէյ խնդրեց և շարունակեց.

— Այսպէս նրա մարմինը ամբողջովին պատառուելուց, արիւնաքամ անելուց, բոլորովին մերկացնելուց յետոյ, ոտքերը թուկով կապելուց յետոյ, քաշքելով մզկիթի դուռը տարած: Նրա գլուխը ջարդուել էր քարերին դիպչելով, մարմինը քրքրւել: Նա արդէն վաղուց էր իր հոգին աւանդել, շունչը փշել, բայց հոգս չէ, գազան թիւրքը պէտք է իր միսսեան մինչև վերջը կատարէր, գազանութիւնը դեռ գագաթնակէտին չէր հասել...

— Այստեղ, մզկիթի առջև նրան տաճկական սովորութեան համեմատ լողացրին,

ինչպէս լողացնում են մուսուլմաններին, դրանով կամենում էին նրա հաւատը փոխել թիւրքացնել:

— Այդ էլ վերջացրին: Դարձեալ ոտքերից քաշելով տարան հանեցին «վանք» ասւած բարձր բլուրի ծայրին: Այդ այն վանքըն է, որտեղ սուրբ կոյս Հոկիսիմէն և Գայանէն էին թագնւել և այդ տեղից փախել: Ինչևիցէ:

— Երկու շուն սատկեցրին նրանք այնտեղ և զրին մինը մի, երկրորդը միւս թեւերի տակ և վարդապետի անշնչացած դիակը ներքև գլորեցին դէպի խոր անգունդը...

— Դա առաջին զոհն էր: Դրան յետեւեցին միւսները: Այսպէս սկսեցին ջարդը և մէկը միւսի յետևից ձեռքը անցած տղամարդկանց մին-մին սպանում և ձգում էին այդ բարձր վանքի գագաթից խոր ձորը, տալով ամեն մինին զանազան չարչարանքներ: Այդ էր պահանջում սրբազն պատերազմը: Իսկ լուսինը իր անտարբեր և սառն դէմքը ցցած դէպի մահկանացուների արարքին դանդաղ իր ճանապարհն էր շարունակում: Օհ այլևս չեմ կարող պատմել... խնդրում եմ ազատ թողէք ինձ, մի ստիպէք, ես այլևս անզօր եմ պատմելու

այն բոլորը ինչ որ տեսան աչքերս, ինչ որ  
լսեցին ականջներս:

Այս անգամ արդէն խեղճ կինը յիշելով  
դառն անցեալը սկսեց կատարեալ լաց լի-  
նել:

Նրա սրտի վէրքերը կրկին նորոգւե-  
ցին...



25485

- 1) Armenische Funken, Vienne 1912.
- 2) Armeniens Leid, Vienne 1912.
- 3) *Թուուցիկ փրուն-փրուն խօսքեր.*  
*(Եւրոպական անեկդօտներ)*  
*Թիֆլիզ 1914թ. գինն է 20 լուսլ.*

Գինն է 15 կով.

Դիմել բոլոր գրավաճառներին կամ հեղինակին  
Тифлисъ, Елисаветинская 5. Ар. Оганянцъ.  
մեծ քանակութեամբ գնողներին 25% զեղչ: